

## Հանդիպում <<Հայջրմուկոյուղի>> ՓԲԸ ղեկավարների հետ

11.12.2014

2014 թվականի դեկտեմբերի 10-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը աշխատանքային հանդիպում է ունեցել <Հայջրմուկոյուղի> ՓԲԸ գլխավոր տնօրեն Պատրիկ Լորենի և ընկերության պատասխանատուների հետ: Հանդիպմանը մասնակցում էին նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Սամվել Թարվերդյանը, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ Ռուբիկ Մինասյանը, Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ քաղաքային և Արտաբույնք, Գետափ, Շատին գյուղական համայնքների ղեկավարները:

Քննարկվեց նշված համայնքների խմելու ջրի մատակարարման որակի և քանակի վերաբերյալ, ինչպես նաև գյուղական համայնքներում ջրաչափերի տեղադրման հետ կապված խնդիրները: <Հայջրմուկոյուղի> ՓԲԸ տնօրինությանն առաջարկվեց հետևյալ հիմնախնդիրները.

- 1.Ջրի շուրջօրյա վարակազերծման նպատակով քլորակայաններում էլ. Էներգիայի ապահովում:
- 2.Գլխամասային կառույցների ցանկապատում:
- 3.Օրվա կարգավորիչ ջրամբարներում լուսավորության ապահովում: